ՌՈՒԲԷՆ ԹԱՐՈՒՄԵԱՆ

Գույնագույն պահեր

Տարվա եղանակները
Օրվա ժամերը

Գարուն

Արեւն այսօր արդեն խայթող է,
Հողի խորքերն է թափանցում,
Զով օդը ջերմ ու կազդուրող է.
Շուտով կգա նոր արթնացում:
Գրչանկար դարձած ծառերը
Հետզհետե կթանձրանան,
Ձրաներկի հյութեղ գույները
Կազդարարեն գալուստ գարնան:
Ահա՛. եկա՛վ. անցա՛վ ձմեռը:
Հոգում՝ բերկրանք անորսալի.
Ինչ-որ մի բան արդեն փոխվել է,
Ինչ-որ մի բան դեռ կփոխվի:
Եւ կորոտա ցասմամբ երկինքը,
Շանթեր արդար կճաճանչեն,
Բյուրեղ ջրի բյուր-բյուր շիթերը
Մաքրող հոսքի կվերածվեն:
Սառույցը կլցնեն գետերը,
Եւ ցուրտը կկորչի հեռվում,
Ու կտիրեն միայն Արեւը,
Անվերջ երկինք ու ջերմություն:

Ձմեռ

Բողոքեցի՞ք ձմռան ցրտին,
Ահա ձեզ ամառվա շոգերը,
Երբ որ անգամ սպասված քամին,
Չի զովացնում այրվող թոքերը:
Մրեց գարնան գույներն ամառը.
Փոշի ու տոթ ամենուրեք,
Այրվել է խոտը, Վարդավառ է.
Գուցե ջրով միայն փրկվեք:
Եւ միայն միտքը, որ մի օր էլ
Կրկին պիտի դողաք ցրտից,
Ստիպում է նախընտրել այս օրը,
Չտրտնջալ խեղդող տապից:
Սակայն կարգից առաջ ընկած
Ինչ-որ տերեւ արդեն դեղնում է,
Կարծես այդ մեկը վախենում է,
Թե կմնա ճյուղին գամված:
Իհարկե՝ ոչ. եւ ճիշտ կարգով
Կանցնի ամենը իր հունով,
Եւ կհասնի ամեն տարվա
Տխուր ավարտը ամառվա:

Աշուն

Ի՞նչ տխրություն. ցնծանք է շուրջը
Ու պապանձված պահում ես շունչը:
Այրեց ամառն իր վառ կանաչը.
Դրա մոխիրն է այս հրաշքը:
Որքա՜ն կանաչն այդ սիրտ հուզեց,
Երբ որ գարնանը հայտնվեց:
Ոչինչ, որ այն արդեն չկա,
Ոչինչ, որ սա էլ կգնա:
Կանցնեն կարմիրը ու դեղինը,
Կանցնեն բոսորը ու դարչինը,
Կտան գույներն իրենց՝ գետնին,
Կվերածվեն գորգի նրբին՝
Փափուկ, խշշուն ու բուրավետ,
Հետո էլ կլուծվեն անհետ,
Խոնավ հողում մինչեւ գարուն,
Մինչեւ նոր կյանք ու նոր ցնծում:
Բայց դա՝ հետո: Իսկ հենց հիմա,
Դեռ աչքն անթարթ կհիանա,
Հոգին դեռ բույրը կշնչի,
Մինչեւ ձմեռն անցնի գործի:



Ձմեռ

Վերջն էր աշնան, օր առ օր
Ձմեռ կիջներ սարից ձոր
Ու կհասներ դաշտերին,
Սեւ-սեւ վարած հանդերին:
Ծանրամարմին քուլաներ
Գյուղի վերեւ կկախեր
Ու կմրցեր սաստկացած
Բուխարու հետ վախեցած:
Ու կոռնար գազազած՝
Դըրսի դռնից կիսաբաց
Ու իր շնչով ահարկու
Ձյուն կդիզեր մութ բակում:
Լուսադեմին կլռեր,
Հոգնած՝ հոգոց կքաշեր,
Ու խաղաղված, ապակուն
Նախշ կգծեր զարդարուն:
Խորհրդավոր լռություն
Կհաստատեր աշխարհում.
Սառը արեւ, կապույտ ստվեր՝
Կախարդական մի պատկեր:

Օրվա ժամերը

Հով է, ցող է, առավոտ է,
Թափանցիկ, բյուրեղ է օդը,
Լռությունն է դեռ իշխում:
Նոր ցոլաց արփու ճաճանչը
Բայց արդեն բզզում է ճանճը,
Զրնգում քամու ղողանջը,
Եւ օդում անհետ լուծվում:

Կարթնանան ննջած ձայները,
Կըեռան օրվա գործերը,
Կկախվի օդում փոշին:
Կկորչեն հեռու լեռները,
Կարճացած անզոր ստվերները,
Եւ արդեն հոգնած ժամերը,
Կհասնեն օրվա կեսին:



Օրվա ժամերը

Լ ավել կայրի արեւը
Չի փրկի նույնիսկ անձրեւը
Կշաղի ու կկորչի:
Ու կրկին հոսում է օդը,
Եւ անզուսպ խեղդում է տոթը.
Գիշերվա զովի կարոտը,
Շատ երկար դեռ կտանջի:

Զովությունը դեռ հեռու է,
Օդը չոր է ու մռու է,
Արեւմուտքն է դեռ շիկնում:
Բայց, ահա, դանդաղ մթնում է,
Կեսգիշեր է, հովն իջնում է,
Եւ աշխարհը համրանում է,
Նոր օրվա հոգսով քնում:

ՀՏԴ 821.19
Բանաստեղծություններ
Ռուբեն Հակոբյան (Թարումեան)
post@tarumian.am
tarumian.am
թարումեան.հայ

ԵՐԵՎԱՆ
2021